



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ

N 17-32
12.05.2017

ՀՀ արդարադատության նախարար
Արփիինե Հովհաննիսյանին

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի Արփիինե Հովհաննիսյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների Խմբի անդամները 2017 թվականի մայիսի 5-ին այցելություն են կատարել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ: Այցելության ժամանակ դիտորդների Խմբի անդամները արձանագրել են ՔԿՀ-ի 1-ին հարկերի իրավիճակը, որտեղ տիրում է գարշահոտություն, խոնավ է, պատերից ծեփը թափված է, այդ հատվածները գտնվում են քարուքանդ վիճակում, առկա են հակասանիտարահիգիենիկ պայմաններ և կարելի է ասել, որ թե աշխատողները, և թե 1-ին հարկում գտնվող կալանավորները/դատապարտյալները գտնվում են անմարդկային պայմաններում:

Վերոգրյալի հիման վրա, առաջարկում ենք քննարկել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի 1-ին հարկում գտնվող խցերը և մասնաշենքերը շահագործումից հանելու հարցը:

Կից ներկայացնում ենք Խմբի անդամների կողմից կատարված լուսանկարները էլեկտրոնային կրիչով:

Հարգանքով՝

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում

և մարմիններում հասարակական վերահսկողություն

իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ

Արայիկ Զախյան